

«ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ», կազմեց և ծանոթագրեց Գ. Ազնա-  
վուրյան, Երևան, 1980, 500 էջ:

1957 թ. ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանգարանը Փարիզից ստացավ ականավոր գրող, հասարակական գործիչ, հրապարակախոս-խմբագիր Արշակ Զոպանյանի մեծահարուստ արխիվը, բաղկացած 70.000 միավորից: Այդ արխիվը պարունակում էր մոտ 30.000 նամակ, որի կեսից ավելին՝ հայերեն, այն էլ գրված նշանավոր այնպիսի մտավորականների կողմից, ինչպիսիք են Կոմիտասը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Դանիել Վարուժանը, Սիմանթոն, Գրիգոր Զոհրապը, Երվանդ Օտյանը և ուրիշներ:

Վերոհիշյալ արխիվը ստանալուց հետո թանգարանի աշխատողների և առհասարակ մեր բանասերների առջև կանգնեց թանկագին այդ նյութերը գիտական աշխարհին և ընթերցող լայն շերտերին ներկայացնելու դժվարին խնդիրը: Անցած 25 տարիների ընթացքում նկատելի աշխատանք կատարվեց այս ուղղությամբ: Երաժշտագետ Մ. Մուրադյանը «Պատմա-բանասիրական հանդեսում» հրատարակեց Կոմիտասի շատ արժեքավոր նամակները՝ ուղղված Ա. Զոպանյանին: Ա. Ավետիսյանը առանձին ժողովածուով լույս էր բերել Զոպանյանի նամակները, մեծ մասամբ Զոպանյանի արխիվից: Մեր դիտական հանդեսներում լույս տեսան բազմաթիվ հրապարակումներ:

Այդ գործում խոշոր ծառայություն ունի հատկապես Գրականության և արվեստի թանգարանի հնագույն աշխատողներից Գոհար Ազնավուրյանը: Բացի սովետահայ տարբեր հանդեսներում տպագրած բազմաթիվ հրապարակումներից, նա կաղմել և տպագրել է «Արևմտահայ գրողների նամակներ» ստվար ժողովածուն (1972 թ.), որը լայն արձագանք գտավ թե՛ մեզ մոտ և թե՛ Սփյուռքում: Այդ ժողովածուի մասին գրվեցին մի շարք գրախոսություններ, որոնցից ամենաբնագրականը պատկանում էր ականավոր գրող Շ. Շահնուրի գրչին: Դրանից առաջ՝ 1965 թ. լույս էր տեսել Ազնավուրյանի կազմած և ծանոթագրած

«Դանիել Վարուժանի նամակներ», որը նույնպես արժանացել էր բարձր դնահատականի:

Այժմ հրապարակի վրա է «Արշակ Զոպանյանի նամակներ», որը պարունակում է մոտ 300 նամակ՝ հասցեագրված տարբեր գրողներին ու հասարակական-մշակութային գործիչներին: Վերոհիշյալ նամակների մեծ մասը վերցված է Ա. Զոպանյանի ֆոնդից, որոշ նամակներ՝ այլ արխիվներից:

Ազնավուրյանի կազմած, ծանոթագրած այս նոր ժողովածուն ուշագրավ է մի քանի տեսակետից: Նախ՝ ընդգրկելով վիթխարի ժամանակաշրջան (1886—1953) և նամակների հասցեատերերի լայն շրջանակ (ավելի քան հարյուր անուն), պարունակում է փաստական հարուստ նյութ՝ հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող ժամանակաշրջանի վերաբերյալ, սկսած համիդյան բռնապետության խստագույն տարիներից, մինչև մեր ժողովրդի վերածնության տասնամյակները, այլ խոսքով՝ մեր օրերը: Երկրորդ՝ նամակներն հստակ կերպով ցուցադրում է Զոպանյանի գրական, հասարակական կյանքի ողջ ընթացքը, ուրվագծում՝ նրա վաղ հայրենասիրությունը, ազգային մշակութային ծառայելու հաստատ դավանանքը: Ազնավուրյանը ժողովածուի ներածական հոդվածում մեջ է բերել 1924 թ. «Զարյա Վոստոկայում» Պ. Մակինցյանի տպագրած հոդվածից այն միտքը, թե Զոպանյանը արտասահմանում «գարձավ մեր լավագույն ուղեկիցը»: Գրքում զետեղված տասնյակ նամակներ, ուղղված Ավ. Իսահակյանին, Գ. Լևոնյանին, Ալ. Շիրվանզադեին և ուրիշներին, դրա փայլուն ապացույցներն են: Դրանցում էրևում է Զոպանյանի անվերապահ դիրքորոշումը դեպի Սովետական Հայաստանը: «Մեր ժողովուրդը,— գրել է նա Շիրվանզադեին, 1930 թ.,— հորհրդային Հայաստանն ավելի թանկագին և հուսատու ոչինչ ունի»: Ի պատիվ Զոպանյանի պիտի ասել, որ նա իր այս համոզմունքին հավատարիմ մնաց մինչև կյանքի վերջը:

Ժողովածուն հստակ հայելու պես արտացոլում է ոչ միայն Չոպանյանի գրական, հասարակական ուղին, այլև ծանոթացնում է այն մարդկանց, որոնց ուղղված են նամակները: Անշուշտ այդ գործիչների տեղը հայ մշակութային պատմության մեջ հավասար չէ: Պետրոս Ադամյանի, Դանիել Վարուժանի, Ավետիք Իսահակյանի, Ալ. Շիրվանզադեի, Յու. Վեսելովսկու, Կոմիտասի կողքին հանդիպում են մարդկանց, որոնց անունները գուցե առաջին բնագամ են լսում: Բայց նույնիսկ նրանց հասցեագրված նամակները հաճախ լույս են սփռում այնպիսի հարցերի վրա, որոնց պատասխանը զովար թե գտնենք մի այլ աղբյուրում:

Հիշյալ նամակները ժամանակաշրջանի գրական-հրապարակախոսական և հասարակական-քաղաքական կյանքի տենդոտ առարկայի արձագանքներն են, մեծ մասամբ գրված լակոնիկ ոճով, տվյալ պահի թելադրանքով, շոշափում են գործնական հարցեր, առանց փրկասիրական խոկումների, ուսուցանելու, ուղղութիւն տալու հավակնության, բայց բոլորի մեջ էլ երևում է Չոպանյանի խոսքի ու գործի կշիռը, նրա հեղինակավոր տեղը հայ մշակութային կյանքում: Չոպանյանը, մասնավորապես որպես «Անահիտ» հանդեսի խմբագիր, մեծ դեր է կատարել երիտասարդ գրողներին ուղղություն տալու, նրանց գրական ճաշակը մշակելու, լեզուն հղկելու գործում: Անգամ Դանիել Վարուժանի, Սիմեոն Սիմեոնյանի նման գրական խոշոր անհատականություններ շատ բանով են պարտական Չոպանյանին: Դա հստակ կերպով երևում է այն խորհուրդներից, որ նա տալիս է իր նամակներում վերոհիշյալ բանաստեղծներին:

Ներկա ժողովածուն պատրաստելիս Գ. Աղնավուրյանը հաղթահարել է մեծ զմլարություններ: Տեքստային անընթեռնելի բառերի, հասարակականների վերծանում, հասկացումների բացում, անծանոթ մարդկանց, բնակավայրերի, գրքերի անունների ճշտում, կենսագրական տվյալների ձեռք բերում. այս բոլորը պահանջում է տեքստաբանական աշխատանքի փորձ, փաստերի նկատմամբ գիտական բծախնդրություն, սեր դեպի կատարվող գործը, հատկանիշներ, որոնք ունի Աղնավուրյանը և ի հայտ է բերել այս ու նախորդ հրատարակություններում: Քսենոֆոնյան ծանոթությունը Չոպանյանի հարուստ արխիվի փաստաթղթերին, Աղնավուրյանին տվել է լայն իրազեկություն արևմտահայ և սփյուռքահայ գրական-մշակութային կյանքին, մի իրողություն, որ նկատելի է ծանոթագրությունների մեջ, որոնք հեռու են սովորական տեղեկատու բնույթ կրելուց: Իրենց

մեջ ներառելով փաստական հարուստ առաջնորդանք տեքստի բացահայտմանը տալիս են գիտական բովանդակություն, նպաստում նամակներում հիշատակվող երևույթների ըմբռնմանը: Նա հաճախ մեջ է բերում ամբողջական նամակներ, որոնք ընդլայնում են մեր գիտելիքների շրջանակը խնդրո առարկա երևույթի մասին: Հավ է, որ դրանք բերվում են, այլապես գատապարտված պիտի լինեին մոտացության: Ինահատականի արժանի է նաև այն, որ գրքի վերջում Աղնավուրյանը տվել է Ա. Չոպանյանի հայերեն և օտար լեզուներով տպագրված գրքերի լիակատար մատենագիտությունը, որ անշուշտ պիտի հետաքրքրի մեր բանասերներին: Այս արժեքավոր ժողովածուն խմբագրել է ակնավոր գրող, սփյուռքահայ գրականության բաջատեղյակ Ստեփան Ալաջալյանը:

Աղնավուրյանը, բացի վերևում հիշատակված ժողովածուներից, կազմել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրական ֆոնդերի «Ուղեցույցը» (1962 թ.), «Գրական ժառանգության» Ա հատորը (1961 թ.), Ն. Մուրադյանի հետ մասնակցել է Հ. Հովհաննիսյանի երկերի գիտական հրատարակության երկու հատորների տեքստի պատրաստման և ծանոթագրման աշխատանքներին:

Ի դեպ, այս տարի լրանում է Գ. Աղնավուրյանի ծննդյան 75 տարին, որի մոտ հիսունը նա նվիրել է արխիվային գործին: 1932—1939 թթ. աշխատել է Երևանի պետական կենտրոնական արխիվում և պետական համալսարանում, իսկ 1939-ից, անընդմեջ՝ Երևանի գրականության և արվեստի թանգարանում (այժմ՝ Ե. Չարենցի անվան): Որպես թանգարանի գրական ֆոնդերի վարիչ (1950 թ.)՝ նա երկար տարիներ աշխատել է որպես երգվյալ ավանգարդը ազգային այն գանձերի, որոնց մասն են կազմում Սայաթ-Նովայի նշանավոր Դավթար, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» սեպտիկ և մարագի օրինակները, Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Ե. Չարենցի, առհասարակ մեր ակնավոր բոլոր գրողների երկերի ինքնագրերը, տասնյակ հազարավոր նամակներ, գրողների անձնական իրերի նմուշներ և այլն: Բայց Աղնավուրյանը միայն ավանգարդ չէ: Մասնավորապես վերջին 25 տարիների ընթացքում նա նամակագրական լայն կապ է ստեղծել Սովետական Միության և Սփյուռքի տարբեր կենտրոններում ապրող հայ մշակութային գործիչների հետ և նրանց օժանդակությամբ ձեռք է բերել մի քանի տասնյակ արխիվներ:

Քանախի. գիտ. դոկտոր Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ